

528

14 JUL 2009

146

F-82

13

«ՆՈՐ ՀԱՍՏԱՏԻ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 13

100

4-30

E. Bombard

ՊՈԶԻՏԻՎ ԱՐ

Թրանս. բնագ. 3-րդ հրատ.
բարզմ. ՌՈՒԲԵՆ

Ժ Բ Ց Լ Ե Ս

1914

Հ. Ռ. Արշակունյաց

№ 13 «ՆՈՐ ՀԱՍՏԵՔ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ № 13

հայ

03-48

100
84-BQ.

901

146
P-83

ur

E. Bombard



ՊՈԶԻՏԻՎԻԴԱԸ

ՀԿ 81
100/1

Ֆրանս. բնագ. 3-րդ հրամ.
քարզ. Ռուիթէն



ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Աղանեսինի, Պոլից. 7.
1913

10.6 MAR 2013

001
08-18

ՅԱՐԱՋԱԲԱՆ

Պողիտիւիզմը սրբագործւած, անձեռնմխելի, բոլորի
առաջ փակւած մի վարդապետութիւն չէ, ինչպէս ոմանք
կարծում են, այլ ընդհակառակը, նա միշտ բաց է մարդկանց
առաջ և պատրաստ՝ ընդունելու գիտութիւնների առաջադիր-
մութեան կողմից ճշգրտւած բոլոր բարեփոխութիւնները:
Իսկապէս՝ հէնց սրանից է առաջ գալիս նրա անվիճելի գե-
րազանցութիւնը միւս բոլոր սիստեմներից:

Պողիտիւիզմը՝ լինելով նոյնքան հին որքան մեր աշխարհը, կազմակերպւելով այն զիտական ճշմարտութիւնների խմբումով, որոնց մարդկութիւնը յաջորդաբար գտել է մեծ նեղութիւններով, երկար տարիների ընթացքում—կը լինի յաւիտենական։ Վերջապէս նա չի խախտւի զիտութեան ապագայ գիւտերից, որովհետև Պողիտիւիզմը դրանց ամփոփումն ու պսակն է լինելու միջու։

ՊՈԶԻՑԻՒԻԴԱՅ

Պոզիտիւիդմի նպատակն է պրոգրեսիւ կերպով բազմապատկել մարդկանց բոլոր ընկերակցութիւնների նիւթական, մտաւոր և բարոյական բարենկցութիւնը, սկսելով եւրոպական ազգերից կամ ընկերակցութիւններից։ Նա իր նպատակին համառմ է մասնաւոր, յատուկ դաստիարակութեան եւ կրթութեան օգնութեամբ։

Պոզիտիւիդմ ասելով պէտք է երեք ճիւղ հասկանալ՝

1. Գիտութիւնների *) մի փիլիսոփայութիւնն, որի եղակացութիւնը այն է, որ մարդս չպէտք է իր վիճակը բարելաւելու համար իր յոյաց միմիայն իր վրայ դնի. այստեղ առաջ է գալիս. —

2. Գիտական մի կրօն եւ մի բարոյականութիւնն. — Այս կրօնը, որ մերժում է բոլորովին գերբնական կամ անդըրերկրային գոյութիւնը, կոչւում է մարդկութեան կրօն։ Բարոյականութիւնը կարելի է հետևեալ կերպով ամփոփել՝ ինքն իրան բարելաւել բարոյապէս, մտաւորապէս և փիզիքապէս—այնպէս որ, գնալով աւելի ու աւելի կարողանայ օգտակար լինել ուրիշին (ընկերական բարոյականութիւն)։

Ուրիշ բառի տակ հասկացւում է երեք խմբակցութիւն՝ մէկը միւսից աւելի ընդարձակ—ընտանիքը, հայրենիքը և մարդկութիւնը։ Այս բարոյականութիւնը կանոնաւորում է նաև ազգերի յարաբերութիւնները իրարու հետ, որից առաջ է գալիս.

*) Մաթէմատիկա. — թւաբանութիւն (հաշիւ), երկրաչափութիւն, մէխանիք։ Տիեզերագիտութիւն. — աստղաբաշխութիւն, ֆիզիկա, քիմիա. Սոցիոլոգիա. — բիոլոգիա, սոցիոլոգիա, (իսկական մտքով) և բարոյականութիւն։

3. Մի դրական բաղաքականութիւն. — Այս քաղաքականութեան նպատակն է ոչնչացնել պատերազմը և կազմակերպել եւրոպայի Միացեալնահանգների հասարակապետութիւն։ Կամ արեւմտեան հասարակաւութիւն՝ ինչպէս Օգիւստ Կոնստանտին է անւանում։ Նա համերաշխութեան մէջ է պահում բոլոր ազգերին այն տեսակէտից, որ հաւասարապէս շահագործում է այն բոլոր աղբիւրները, որ տալիս է մեր երկրագունդը, որի վրայ բնակւում ենք։

Պոզիտիւիզմը մերժում է ամեն մի բոնի գործողութիւն, որ կատարւում է ընկերակցութիւնը կազմակերպելու նպատակով. Նա գործում է ցոյց տալով և համոզելով՝ առանց ստիպմունքի։

Երանշանաբանն է.

Սէրը՝ իրբե սկզբունք.

Կարգը՝ իրբե հիմք,

Առաջադիմութիւնը՝ իրբե նպատակ։

Երանշանաբան բանաձենն է՝

Ապրել ուրիշի համար։

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է նշանակում հոգի. — Հոգի է կոչւում ուղեղի գանական ֆունկցիաների միւսութիւնը։ Ուղեղի տարրական ֆունկցիաները, որոնք թւով 18 են, բաժանվում են 3 խմբերի—1 Միբա (կամ զգացմունք), 2 Միտք (կամ իմացականութիւն), 3 Բնաւորութիւն (կամ գործունէութիւն)։

I. Միբա կամ զգացմունք

Նա կազմւած է 10 տարրական ֆունկցիաներից, որոնցից 7-ը եսասիրական են, իսկ 3-ը՝ ալտուրիստական։

7 եսասիրերը հետեւեալներն են՝

1. Սննդական բնազդը,

2. Սեռական »

3. Ծնողական »

4. Կործանիչ կամ զինւորական բնաղդը,
5. Կազմակերպիչ կամ էնդիւստրիէլ բնաղդը,
6. Հաղարտութիւն կամ տիրապետելու կարիքը և
7. Անափառութեան կամ իրան ցոյց տալու, գովիլու կարիքը:

3 Ալտուրիսներ—

1. Ընկերակցական սէր,
2. Յարգանք և
3. Բարութիւն *):

II. Միժ կամ իմացականուրիւն (5 ֆունկցիա)

1. Թանձրացեալ գիտողութիւն,
2. Վերացական »
3. Էնդիւկտիւ մտածողութիւն,
4. Դէգիւկտիւ »
5. Լեզու:

III. Բնաւորուրիւն կամ գործունեուրիւն (3 ֆունկցիա)

1. Քաջասրատութիւն,
2. Խոհեմութիւն և
3. Ամրապնդութիւն:

Զգացմնունքը մղում է դէպի գործը, իմացականութիւնը կառավարում է գործը, գործունէութիւնը իրագործում է, առաջ է բերում գործը:—Շատ հազարիւտ է, որ մենք գործենք միմիայն մի պարզ զգացմունքի ազգեցութեան տակ, ուրիշ խօսքով ասած՝ միմիայն մի տարրական ֆունկցիայի ազգեցութեան տակ. այլ՝ համարեա թէ միշտ գործում ենք մի բարդ զգացմունքի ազգեցութեան տակ, որ բաղմաթիւ տարրական ֆունկցիաների մի խառնուրդ է:

*) Բարութիւն կամ տիեզերական սէր (համակրանք) կամ մարդկութիւն.

ՍՈՑԻՈՆՈԳԻԱԿԱՆ ԵՐԵՖ ՕՐԵՆՔՆԵՐ

Ուղեղի ֆունկցիաների երեք խմբերը, որոնց միութիւնը կազմում է այն՝ ինչ որ հոգի է կոչւում՝ Միրտը (կամ զգացմունք), Միտքը (կամ իմացականութիւն), Բնաւորութիւնը (կամ գործունէութիւն), մարդկանց երևան գալուց մինչև մեր օրերը՝ անցել են երեք յաջորդական վիճակներից, որոնք են.

I. Միժ կամ զգացմունիք

Ընկերակցութիւնը սկզբում ընտանիկան էր,
յետոյ՝ դարձաւ քաղաքական,
վերջը՝ համաշխարհային:

II. Միժ կամ իմացականուրիւն

Իմացականութիւնը սկզբում աստուածաբանական էր,
յետոյ՝ դարձաւ մետաֆիզիքական,
վերջը՝ գիտական:

III. Բնաւորուրիւն կամ գործունեուրիւն

Գործունէութիւնը սկզբում յաղթական զինւորական էր,
յետոյ պաշտպանողական զինւորական,
վերջը՝ էնդիւստրիական:

Այս երեք յաջորդական վիճակները համապատասխանում են Աշխարհի Պատմութեան երեք մեծ բաժանմունքներին.

Նախ՝ Հին Աշխարհը,
յետոյ՝ Միջին-Դարը *)
վերջը՝ Նոր-Դարը:

*) Պողիատիւսաների համար Միջին-Դարը սկսում է 400-ից և վերջանում 1300-ին:

ԳՈՐԾՄԱՆԵՐԸ ԽՈՎՃԱՅԱԿԱՐԱՅԻ

Այն եղանակը, որով ըմբռնում, հասկանում են Աշխարհը, Մարդուն և դրանց մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը, կազմում է մի փիլիսոփայութիւն կամ հաւատք, որը մարդկանց ընկերակցութիւնների մէջ կրօն անտան տակն է հանդէս գալիս և ամփոփում է մի գոգմայի մէջ: Բնականաբար, այս գոգման փոփոխւել է մարդկանց երկրիս վրայ երևալու օրից մինչև այժմ այն չափով՝ ինչ չափով որ մարդկային իմացականութիւնը զարգացել է. այսպէս՝ այժմ նա շատ տարրեր է իր սկզբնաւորութիւնից:

Սկզբնական ֆէտիշիզմ՝ յետոյ—որը ծանօթ է բոլոր ժողովուրդներին և որը ներկայացրել է երկու ֆադ—1. Անհատական ֆէտիշիզմ՝ (որ դեռ գտնուում է սև ցեղի մէջ), 2. Աստղապաշտական ֆէտիշիզմ՝ (որ դեռ գտնուում է դեղին ցեղի մէջ).— գոգմայի սպիտակ ցեղի մէջ կատարած ժեխառը շրջանները հետեւեալներն են.

I. Աստածաբանական դոգմա

1. Պահպանողական կամ սասըրտոտալ բազմաստւածութիւն (հին թէոլոգատիաներ):

2. Պատերազմական կամ զարգացողական բազմաստւածութիւն (Յունաստանը, Հոռոմը):

3. Միաստւածութիւն
 { հրէայ
 քրիստոնեայ
 մահմեղական:

II. Մետաֆիլիքական դոգմա

Այս դոգման, որ միայն մի անցում է աստածաբանականի գիտականի մէջ, ոչ մի տեսական կրօն առաջ չի բերել, այդտեղ Աստծուն փոխարինում է Բնութիւնը:

III. Գիտական կամ դրական դոգմա

Այս դոգման աստածաբանութիւնից և մետաֆիլիքականց ազատւելով՝ բաժանում է երկու ընթացիկ տեսութիւն-

ների: 1 նիւթապաշտութիւնը, որ որոնում է, բայց՝ իգուր—առարկայական սինթէզը, 2 պողիտիւիզմը, որ իրագործել է ենթակայական սինթէզը: Այս վերջինն է, որ յանգում է մարդկութեան կրօնին:

Մարդկութեան կրօնը

Ի՞նչ է նշանակում կրօն. — Ամեն մի կրօն նպատակ ունի առաջնորդելու մարդկային գոյութիւնը, որ արտայայտում է հետեւեալ երեք մեծ ձևերի տակ—մտածել, սիրել, զործել, այստեղից առաջ են գալիս հետեւեալ երեք ճիւղերը.

Դոգմա, գաղափարները առաջնորդելու համար.

Արարողութիւններ (Culte) զգացմունքները »

Ասորդուկանոն (Régime) զործողութիւնները »

Դրական դոգմա. — Նա այս գաղափարի մէջն է կայանում, թէ մարդկութիւնը միակ ճշմարիտ և իրական նախախնամութիւնն է մարդու համար, նախախնամութիւն բառի տակ հասկանալով ոչ թէ մինչև այսօր ապրած բոլոր մարդկանց բազմութիւնը, այլ միայն այն մարդկանց բազմութիւն խումբը, որոնք մարդկութեան ծառայել են:

Դրական արարողութիւն. — Նա յարգանք է մատուցանում Մարդկութեան՝ յանձին իւր գլխաւոր ներկայացուցիչների, այսինքն՝ ամերող աշխարհում, բոլոր գարերում յայտնի, նշանաւոր մարդկանց և կանանց, որոնք մարդու մտաւոր, բարոյական և փիղիքական բարելաւման նպաստել են*):

Դրական կարգու կանոն. — Սրա էութիւնը նրանումն է, որ իւրաքանչիւրը—իր ուժերի համաձայն-զործում է ժամանակակից եւ ապագայ Մարդկութեան ծառայութիւն մատուցանելու համար, մի խօսքով օգտակար լինել ուրիշին:

Վերջապէս՝ Մարդկութեան կրօնը այսպէս է որոշում՝ ճանաչել, սիրել եւ ծառայել Մարդկութեան:

Պողիտիւիզմը, հեռու ուրիշ կրօնները արհամարհելուց, նրանցից իւրաքանչիւրին իր արդար բաժինն է տալիս՝

*) Տես պողիտիւիստների օրացոյցը Օ. Կոնտի:

նայած թէ որքան բարոյականութիւն են մացրել աշխարհն Նա կրօնների վրայ նայում է իրրև անհրաժեշտ էտապների սախքան վերջնական, այսինքն՝ Մարդկութեան կրօնին հասնելը:

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարդկութիւնը հազարաւոր մարիներ է ապրել նախքան թանձրացած գիտութիւններից բարձրանալը: Ք. ա. միայն VI-րդ դարում, Յունաստանումն էր, որ վերացական գիտութիւնը ծնունդ առաւ, որպէս զի այդտեղից տարածեի և զարգանայ ուրիշ տեղերում, զրում, զլխաւորապէս Արևմուտքում *): Այս վերացական գիտութեանն է պարտական սպիտակ ցեղը իր գերազանցութիւնը միւսներից:

Զանազան վերացական գիտութիւնները, որոնց ամբողջութեան մէջն է բովանդակւում այսօր մարդու բոլոր ծանօթութիւնները, հետեւեալ կարդովն են հաստատեել —

VI-րդ դար Ք. Ա. հաշիւը, հիմնեց Պիթագորը.

IV-րդ » » Կրկաչափութիւնը հիմնեց Եւկլիդը.

III-րդ » » Մեքանիքը » Արքիմեդը.

II-րդ » » Աստղաբաշխութիւնը » Հիպատրոգը:

Միջին դարում գիտութիւնը ճնշւած էր Արևմուտքում թէ բարբարոսների արշաւանքներից և թէ կաթոլիկութեան յարուցած աստեածաբանական հարցերից, որոնք զբաղեցնում էին բոլորի մաքերը: Յունական գիտութիւնն արաբներն ընդունեցին և պահեցին մինչև վերածնութիւնը, երբ կրկին յանձնեցին Արևմուտքին: Կոպերնիկոսի հետ Եւրոպայում արթնանում է գիտական ոգին: XVI-րդ դարում Կոպերնիկոսը դտնում է Աշխարհի ճշմարիտ սիստեմը:

XVII-րդ դարում Գալիլէն հիմնեց ֆիզիկան,

XVIII-րդ » Լավուչիէն » քիմիան,

1801-ին Բիշան հիմնեց բիոլոգիան,

1822-ին Կոնտը » սոցիոլոգիան:

*) Յունաց Թաղէս փելիսոփան է հիմնել վերացական գիտութիւնը.

Վերջը՝ Օ. Կոնտը բարոյականութիւնը բաժանեց սոցիոլոգիայից, որպէս զի վերջնս դարձնի մի բարձր գիտութիւն, նպատակ և պատակ մնացած բոլոր գիտութիւնների:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Ամեն քան յարաբերական է, ահա միակ բարցարձակ սկզբունքը: Բացարձակ ճշմարտութիւնը ոչ ոք չգիտէ: Մենք միմիայն յարաբերական ճշմարտութիւնն ենք ճանաչում: Հետեւով Մարդկութեան մտաւոր էվոլյուցիայի շրջաններին տեսնում ենք, որ յարաբերական ճշմարտութիւնն ազատ, փոփոխւող իրերի բացարձակ ըմբռնումի մի ապարոքսիմասիոնն է:

Իմացականութիւնը դրական վիճակի մէջ ընկաւ, երբ իմացաւ մետաֆիզիքական և Աստեածաբանական բացատրութիւնների ոչնչութիւնը, հրաժարւեց իզուր տեղ ըսկըզբնական եւ վերջնական պատճառներն որոնելուց, որպէս զի նւիրւի երևոյթները կարգաւորող օրէնքների ուսումնասիրութեանը:

Պողիտիւիզմը կամայական, աղատ, գերբնական կամքի բէժիմը փոխարինում է ընական անդրդմելի Օրէնքներով:

Բոլոր երևոյթները կապւած են միմիանց հետ անդրդմելի օրէնքներով: Այս օրէնքները ներկայացնում են ճակատագիրը (fatalité), որ ծանրանում է Մարդկութեան վրբայ *): Բայց՝ եթէ այսօր գիտենք որ երևոյթների կարգադրութիւնը կապմում է առաջին գիտութիւնը:

*) Ամենաընդհանուր օրէնքների ուսումնասիրութիւնը կազմում է առաջին գիտութիւնը առաջին գիտութիւնը առաջին գիտութիւնը է այն օրէնքների մասին, որոնք յատուկ են երևոյթներին: Եւրաքանչիւր կարգի երրորդ գիտութիւնը յատուկ է վերացական էնդիւստրիայի մասին: Սա տեսական մասից գործնականի անցումն է, այս երեք ճիւղերը կազմում են պողիտիւ վիխութիւնը:

տրութիւնն անդրդելի է, գիտենք նաև այն, որ մենք կարող ենք ազդել երևոյթների վրայ նրանց թափը *) ձևակերպիլու տեսակէտից: Այսպիսով մենք հնարաւորութիւն ունենք մեր վիճակը որոշ չափով բարելաւելու: Այսպիսով մարդը իր բաղդը մասամբ իր ձեռքումն է պահում և դառնում է ինքը իր համար իր սեփական նախախնամութիւնը:

ՔԱՂԱՔԱԿԲԹՈՒԹԵՍՄՆ ԸՆԹԱՅՔԸ

Ֆէտիշական շրջանից յետոյ, որ բոլոր ժողովրդների համար ընդհանուր էր, մարդիկ խմբւեցին թէոկրատական տիպի ընկերակցութեան ձեր տակ: Այս ընկերակցութիւնները հիմնած էին այնպիսի սկզբունքների վրայ, որոնք որոշ չափով բաւականութիւն էին տալիս մարդկային հոգու երեք տարրերին (զգացմունք, իմացականութիւն, գործունէութիւն), որոնք այդ ժամանակ քիչ էին զարգացել:

I. ԹԵՌԵՎԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Համապատասխանող հին դարին, որի մէջ բէժիմը զինուրական-թէոկրատական է:

Այդ ժամանակում անցումի երեք շրջաններ առաջացան, որի միջոցին հոգու տարրերը զարգանում էին.

1 Անցում Յունաստանից (իմացականութեան զարգացումը):

2 Անցում Հռովմից (գործունէութեան զարգացումը):

3 Անցում Քրիստոնէականութիւնից (զգացմունքի զարգացումը):

Այս երեք զարգացած տարրերի հետ ընկերակցութեան մի երկրորդ տիպ կազմակերպւեց Արեմուտքում, այդ էր.

**) Օքինակ՝ փոխանակ լուսամուտից փողոցն ընկնելու մարդը շինում է աստիճաններ, դրանով ծանրութիւնը ոչընչացրեց: Ոչ, այլ միմիայն ձեւակերպեց թափը, որպէս զի աւելի լաւ ծառայեցնի իր շահերին:

II. ԿԱՔՈՂԻԿ-ՖԷՆԴԱԿ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Համապատասխանող միջին դարին, որի մէջ բէժիմը մետաֆիզիքական-պաշտպանողական էր:

XIV-րդ դարուց սկսած այս ընկերակցութիւնը քանդւելու վրայ է մարդկութեան գործունէութեան և իմացականութեան նոր զարգացման պատճառով: Երբ Պողիտի ըարոյականութեան շնորհիւ զգացմունքը այն աստիճանին կը բարձրանայ, որ կարող կլինի, ներդաշնակութեան մէջ լինենողու միւս տարրերի հետ, այն ժամանակ ընկերակցութեան մի երրորդ տիպ կհաստատւի, որը կլինի:

III. ՍՈՍԻՈԼՈԳԻՖ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Համապատասխանող Արդի Դարին, որի մէջ բէժիմը կլինի զիտական-էնդիստրիական:

ՍՈՑԻՈԼՈԳԻՖ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պողիտիւիզմը Սոցիոլոգիա է առաջ բերում ոչ թէ հաճոյքի համար, այլ՝ որպէս զի մի քաղաքականութեան հասնի: Միայն Պողիտիւիզմը կարող է մի ընդհանուր, լիազօր քաղաքականութիւն հաստատել, որովհետեւ միայն նա է, որ յարգել է տալիս, որոշում է մի երկրաւոր նպատակ ճիշտ համապատասխան մարդկային գոյութեան, որ մարդանց նըրկատի է առնում իբրև եղբայրներ, որոնք աշխատում են միւսոյն նպատակին երկրաւոր բարձրագոյն քաղաքակրթութեան հասնելուն:

Բոլոր ժամանակների և բոլոր երկիրների ընկերակցութիւնները մանրամասն զննելուց, երեք վիճակների օրէնքները գտնելուց, մի խօսքով՝ սոցիոլոգիան հիմնելուց յետոյ, — Զիւտատ Կոնսալտ տալիս է ապագայ սոսիոլոգատական ընկերակցութեան կազմակերպութիւնը, որ կամաց-կամաց և գիտակցարար ձեւակերպւում է XIV-րդ դարուց սկսած, որպէս զի աւելի կամ պակաս հեռաւոր ապագայում փոխարինի միշտն դարի կաթոլիկական-ֆէողալական ընկերակցութեանը:

Սոսիոկրատիան կամ ապագայ ընկերակցութիւնը հիմնաւում է հոգեւոր և ժամանակաւոր երկու կարողութիւնների բաժանման սկզբունքի վրայ:

Հոգեկան կարողութիւնը կը կառավարի մտաւոր և բարյական (յատուկ կրթութիւն և դաստիարակութիւն *) կեանքը:

Ժամանակաւոր կարողութիւնը կառաջնորդի գործունեայ կեանքը (նիւթական շահերը):

Ինչո՞ւ համեար սոսիոկրատիան չի կարող հիմականից հիմնել

—Որովհետև մտքերը գեռ բաժանւած են երեք վարդապետութիւնների —Աստածաբանական, Միտաֆիզիկական և Պողիտիւական—մէջ. նոյնիսկ՝ երեմն, այս երեք վարդապետութիւնները միաժամանակ գոյութիւն ունին միենոյն մտքի մէջ: Մի որևէ է ընկերակցութեան կազմակերպութիւնները լինելով մի ընդհանուր գաղափարի. կամ ընդհանրապէս ընդունւած առաջնորդող հաւատոքի տրամաբանական հետևանքները՝ պէտք է սպասել, որ համաձայնութիւնը հաստատի այս նիւթի նկատմամբ: Դրական (positiv) գիտական վարդապետութեան յաղթանակը ապահովւած է հէնց միայն նրանով, որ նա գիտական է, իսկ գիտական ճշմարտութիւնները միակն են, որոնք համաշխարհային յատկութիւն ունին ուրեմն՝ բաւական է, առայժմ, կատարեալ ազատութիւն տալ երեք վարդապետութիւնների մրցութեան արտայայտութեանը:

Օ Ր Ա Ց Ո Յ Յ Ը

Պողիտիւիստ կոնկրէտ **) օրացոյցը բաղկանում է 13 ամիսներից, որոնք 28 օր ունեն, կլինի՝ 364 օր, որի վրայ աւելացնում են մի լրացուցիչ օր՝ եթէ տարին պարզ է, եր-

*) Սրաի բարոյական կրթութիւն զէրօ է, անհամապատասխան կամ հակառակ մտաւոր կրթութեան:

**) Մի երկրորդ օրացոյցը, որ կոչում է վերացական, վերապահւած է այն ժամանակաշրջանին, երբ Սոսիոկրատիան կակաի կանոնաւոր կերպով գործել:

կու օր՝ եթէ տարին նահանջ է: Նա ընդհանրապէս կոչւում է մեծ մարդկանց օրացոյցը:

Ի՞նչ է նշանակում մեծ մարդ:

Մարդիկ գնահատելու համար հարկաւոր է մի տեսութիւն: Այդ տեսութիւնը պէտք է վերացական լինի, այսինքն՝ յարմար բոլոր ժամանակներին և բոլոր տեղերին: Նա գոյութիւն չունի Պողիտիւկմից դուրս:

Նա՝ որ օժտւած է ուրիշներից լաւ ուզելով թէ իմացականութեան և թէ բարոյականութեան տեսակէտից, հետեւաբար աւելի ընդունակ զգալու իր քաղաքակիցների տանջանքները, գտնելու այդ ցաւերը բուժելու գեղը, նա որ եռանդ ու ոյժ ունի բարին գործելու, -- մեծ մարդը նա է:

Մեծ է այն մարդը, ով որ ազնիւ բարձր ներշնչումներ կրելով իր մէջ՝ օժտւած որոշ ձիրբով հարցը տեսնելու և լուծելու: Մի խօսքով՝ մեծ մարդ նա է ով որ զիտէ, ցանկանում է և կարող է օգտակար լինել մարդկութեան:

Մեծ մարդիկ ընկերական կազմակերպութիւնների անհրաժշտ օրգաններն են, օրգաններ՝ որոնք որոշ չափով լաւ են եղել գործունէութեան համար, մի հանգամանք, որ հնարաւորութիւն է տալիս դրանց բարոյական և սոցիոլոգիական մեծութիւնը գնահատելու:

Օ. Կոնտը կրնկրէտ օրացոյցը կատարելագործելու համար՝ կարիք զգաց մեծ մարդկանց երեք կարգի վերածել, առաջին կարգին պատկանում են ամիսների գլուխները կազմողները, երկրորդին՝ շաբաթների, երրորդին՝ օրերի:

Ես աչքի ընկնող կազմութիւնը, կարձառաց կերպով ներկայացնում է մարդկային իմացականութեան զարգացման պատմութիւնը: Նա նոյնպէս ցոյց է տալիս, որ Արևեստի աղդեցութիւնը քաղաքակըրթութեան ընթացքի վրայ մօտաւորապէս չէ, մինչդեռ գիտութեանը՝ չէ:

Մեծ ՄԱՐԴԿԱՆՑ ՕՐԱՑՈՅՑԻ ԱՄԻՍՆԵՐԻ 13 ԳԼՈՒԽՆԵՐԸ
Հ Ի Ն Դ Ա Ր

15-րդ դար Մովսէս 1-ին ամիս սկզբնական թէոկրատիա 9-րդ » Հոմերոս 2-րդ » հին բանաստեղծութիւն

4-րդ գար Արիստոն. 3-րդ ամիս փիլիսոփայութիւն
3-րդ » Արևիմեղ 4-րդ » զիտութիւն.
1-ին » Կեսար 5-րդ » վիճակական քաղաքակըբ-
թութիւն
1-ին » Պօղոս Առաք. 6-րդ » Կաթոլիկութիւն:

У б 2 б в . т у р

8-րդ դար Շարլըման, 7-րդ ամիս Քէողալական քաղաքա-
կրթութիւն:

Ն Ա Ր Ա Գ Ո Յ Վ Ե Ր Ա Ը

14-րդ	դար	Դանաէ	8-րդ	ամիս	արգիւնէպոպէա
15-րդ	»	Գուտտենբերգ	9-րդ	»	Էնդիւստրիա
16-րդ	»	Շչքապիր	10-րդ	»	դրամա
17-րդ	»	Դէկարտ	11-րդ	»	փիլիսոփայութիւն
18-րդ	»	Ֆրիտրիխ	12-րդ	»	պոլիտիկա
19-րդ	»	Բիշա	13-րդ	»	գիտութիւն:



«ՆՈՐ ՀՈՍՈՒՆԻՔ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1	«Կինը» Լեռն Շահթ	.	.	.	20 կ.
№ 2	Երջմոլիկներ Ռէն	.	.	.	10 կ.
№ 4	Ժառանգութիւն Վ. Վալաղեան	.	.	.	30 կ.
№ 5	Վարժուհին Միք. Մանւէլեան	.	.	.	5 կ.
№ 6	Կին Ռէն	.	.	.	10 կ.
№ 8	Յունական Փիլիսոփայութիւն Ե. Ֆրանգեան	.	.	.	25 կ.
№ 9	Նար-Դոսի ստեղծագործութիւնը Ա. Տէրտէբեան	.	.	.	20 կ.
№ 10	Դեպի Տիեզերք Դ. Դեմիրճեան	.	.	.	10 կ.
№ 11	Ճակատագիր Միք. Մանւէլեան	.	.	.	15 կ.
№ 13	Պողիսխիզմը (E. Bombard) թարգմ. Ռուբէն	.	.	.	5 կ.

«Ազգային գրադարան



NL0152617

